ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

26 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 112-Ա

ք. Երևան

«ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 54-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերության 2025 թվականի սեպտեմբերի 15-ի տեսալսողական ծրագրի վերաբերյալ ծանուցումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. Հաստատել «ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերության տեսալսողական ծրագրի վերաբերյալ ծանուցումը՝ համաձայն Հավելվածի, արձանագրելով, որ «PLAYBOY TV EUROPE» տեսալսողական ծրագիրն առանց ժամային սահմանափակումների կարող է տարածվել սպառողների կողմից այդ հաղորդումների հասանելիության արհեստական արգելքի (կոդի) ներդրման տեխնիկական հնարավորության առկայության դեպքում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 26
ք. Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2025 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 112-Ա որոշման

Տեսալսողական ծրագրի անվանումը	**Ժամկետը**
«PLAYBOY TV EUROPE»	պայմանագրի գործողության ժամկետով